

“Droschak”

ORGANE

de la Fédération

Révol. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :

Rédaction du “Droschak”

GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

ՅԱԿՈԲ ՂԱՐԱԿԵՕԶԵԱՆ

(ԶԱՌԵՆ)

Անհուն կսկիծով կուգանք յայտնել սիրելի ընկերոջ մը հերոսական մահը:

Օգոստոս 12-ի առաւել, ժամը 9-ին, մատնութեան մը շնորհիւ իր տան մէջ պաշարւելով՝ Զաւէն չուզեց անձնատուր ըլլալ, կրակ ըրաւ ոստիկաններուն վրայ և իր վերջին գնդակով՝ վերջ տաւ իր մատաղ կեանքին:

Յեղափոխութիւնը Զաւէնի անձին մէջ շիտակ գործիչ մը կորսնցուց, բայց անոր հերոսական մահը նոր ապացոյց մըն ալ բերաւ յեղափոխական իդէալի անսլաց վեհութեանը:

Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

ԱՍՏԻԱԾ, ՓԷԴԱՅԻՆԵՐՆ ԵԿԱՆ

«Յոյս տանք մեր հասարակութեան խեղճաւոր մասին, որ ընդունակ ենք յեղափոխական— թէիւ անհաւատար— կութիւնը յաջողութեամբ աւաջ տանելու. յոյս տանք ամբողջ աշխարհին, որ հայն էլ դիտէ կուէլ ազատութեան համար»:

Հրահանատար ընկերոջ կողմէն Խանասորի հերոսներուն ուղղած քաջաւերական խօսքին վերջին բառերն էին անոնք:

Բանի՜ հոգի ուրի խորհին արդեօք պահ մը կանգ առնել այդ պարբերութեան վրայ, որ կոկիծոտ կշտամբանք մը եւ համակերպող դառնութիւն մը կըսքողէ իր մէջ:

Մահը գրկել գիմարներուն՝ անոնց, որ նւիրական բոյ մը սրտելնուն մէջ, անգին էակներ կրկնի վրայ թողած, միտքերնին խցած յիշատակներու տուցե՜. նո՛սնոթին գրկը անխռով կ'հրկաննաւի, անոնց է որ կուգուին այդ խօսքերը:

Հաղիւ՜ երբեք պատմութեան մէջ այդքան ծանր զո՛ւ մը պահաջեցաւ յեղափոխականէն Յոյն, խառնացի յեղափոխականը մահաւան հետ իր մաքառումներուն մէջ, աչքը եւ տին չէր. դիտէր, թէ ամբողջ ժողովուրդի մը հոգին՝ հաւատուն ու ազգասը, գիտուն ու ռամիկը, մէկ սիրտ կ'զած անձկութեամբ կը հետեւի իր զաւկի աստղին. դիտէր, թէ յաղթական՝ անոր գրկին ու համարյոններուն մէջ պիտի մտնար իր բոլոր զրկանքները, թէ անշունչ՝ իր գէմքին վրայ սիրտի զգար անոր աղիւ աղի արցունքներուն կաթկթիլը:

Հայ յեղափոխականին միայն վիճակած է իր մահաւան սրկումներուն մէջ ո՛չ միայն պաշտած զաղափարին իրագործումը յանձնել Սպազային, այլ զի՛ն իր մահաւան սրկարացումը անկէ յուսալ:

«Իրաւունքը սրի ծայրն է» ըսած էին ձիջդ էր. եւ հայ յեղափոխականը սուր վերցնել քսպոզեց՝ այդ իրաւունքն

ունենալու համար: Բայց հայ հարստար ոչ միայն չգրաւ այդ սուրը իր գիւղացի եղբոր ձեռքը, հայրենի տունը պաշտպանելու, այլ նոր շղթաներ կոխեց՝ քսակն ալ բանալով համիրին՝ հայկական դատը ջախջախելու համար . . .

Ազատ կրկիր կծկող պարոններ ուրիշ ճամբայ դառն. փլիւղիւններու ծակ քղանցքները վնասեցին՝ «Աչքէ հետու» որսէ հետու» մնալու համար Հայրենիքի թշուառութենէն, որ չոր տեսութիւններու չէ կարօտ, այլ անմիջական դարմանի:

Եւ ի պաշտումին ահագնապէս զաւաղին այդ վայրկեանն էր. մեր պատմութեան ամէնէն տխուր էջերէն մէկը, երբ կրցողը կը փախչէր զաւերու աշխարհէն, իրեւ Սողոմէ մը, ուր ո՛չ մէկը կտին կը դառնար՝ քալ անալու վախէն . . .

Հո՛ր է որ կրեւան կուգայ հայ յեղափոխականը իր ամբողջ մեծութեանը մէջ, Բաղէշի մէջ պատառը մըն է ան, որ շանթաւար կ'ընէ ժողովուրդի կեղեքիչները: Պօլիս՝ աներձեպ ողի մըն է սպառնալին, որ անխռով կ'երթար, երէկ, օրը ցնդեցնելու Բ. Դուռը— ո՛վ գիտէ, զեւ ինչե՛ր վերապահելով վաղւան . . .

Վասպուրականի մէջ ֆէդայի է անոր անունը, որ կրկին կրեւան կուգայ, բայց ոչ իր տկար ուժերով եւ պաշտպանողական տակտիկով, այլ իւրեւ կազմակերպած ուժ մը՝ բայց դաշտին մէջ կտիւ մղելու: Արաբներու, ժիրայրներու եւ Յուններու խռովերը չեն ալ՝ անհատական, կոյր վրէժի սեւեռուն գաղափարով: Խանասորի դաշտը երկա՛ր դարերէ հաւ առաջին անգամ կը տեսնէ կազմակերպւած հայ զօրագունդ մը, որ կ'երթայ պատմելու վայրենի ցեղ մը եւ անոր արիւնիզակ պիտը՝ կոռուփի այդ թաղաւորութեան մէջ:

Հայ յեղափոխականն զգայ, որ ա՛լ ժամանակն էր հաւատարմանը ներշնչել ժողովուրդին իր սեփական ուժի մասին, այն հաւատքներէն մէկը, որ լեռներ կը շարժեն:

Եւ կատարեց իր այդ պարտքը ամենէն փայլուն կերպով. ամբողջ աշխարհ մը ամհեռացաւ այդ արիւնոտ լեռներէն: Մազրիկցոյ սննդացումը, ֆէդայիներու աննշան վնասով

յանկարծակի անհետացումը այնպիսի խոշոր իրողութիւններ են, որ չեն մոռցւիր քիւրդի կեանքին մէջ: Քիւրդը սուկումով պիտի ցուցնէ Շարաֆի վրաններուն երբեմնի տեղը:

Քիւրդին դաս մը պէտք էր. առաւ այդ դասը, և չլիտի մտնար: Կիտէ հիմա, որ կայ վրէժխնդիր անխոցելի էակ մը, որ քարեքուն տակէն կ'ելլէ յանկարծ սատանի պէս և կամ զիշերւան մութին մէջ կը անկի առջևդ: Իր հրացանը չ'երեւիր յաճախ, բայց յիշ գնդակը կը գտնէ՝ քիւրդը:

«Քիւրդերու անզուսպ ըլլալուն կարծիքը ջուրն ինկած է», ըսաւ անդլիական հիւպատոսը Վան մասած ֆէդայիներուն: Թո՛ղ լսեն մերինները և խորհին: Հայ յեղափոխութիւնը կատարեց իր պարտքը: Եւրոպան գիտցաւ, որ հայն ալ գիտէ կուր ինչպիսիքի համար և «պատիւ» գոչեց այդ «պատերազմաւէր» մողովուրդին:

Իսկ հայը, հաւատա՞ց, որ իր զաւկներու երակին մէջ սառած չէ դեռ այն արիւնը, հողին մէջ մարած չէ անկախութեան այն հուրը, որոնց շնորհիւ միայն տէր Էդալ իր պատմական հայրենիքին: Հաւատա՞ց, թէ անասուն կամքը, խելքը և անձնուրացութիւնը հրաշքներ կրնան պործել:

Յուլ. 25-ը պատմական մեծ օր մը կը մնայ օդ. 14-ին հիտ Այն առտուն, մթնշաղին, երբ Արշալուստմը իմանաւ սորի քաշտին մէջ թշնամին պաշարած՝ փողի ձայնին կը սպասէր՝ կրակը անդալու—ստեղծմի սուր ճիչ մը քիւրդ կնոջ մը կրծքէն փրկած՝ սաւառնեցաւ օդին մէջ:

—Աստուած, ֆէդայիներն եկան:

Թշնամիի հոգեկան վիճակը և հոր սկսող չրջան մը կը յատկանշէր այդ աղաղակը: Հայութեան թշնամի օդին էր, որ իր պարտութեան ողորդ կը կարգար:

Այն օրը նոր իրաւունք մը ստացած էինք մեր լեռներուն վրան, որովհետեւ նոր վախ մը ձգած էինք հմու:

Թո՛ղ չմոռցի ուրեմն այդ աղաղակը: Թո՛ղ անոր արծաղանգը վազէ կորդուքէն մինչեւ իսպախիք, Տաւրոսէն՝ Մառիտ, թո՛ղ մահաւն քարտուղ փչէ թշնամիին իր գիւական ձայնով:

«Աստուած, ֆէդայիներն եկան . . .»

Յ Ե Դ Ա Յ Ի Ն Ե Ր Ի

Ա Ր Ի Ի Ն Ա Ղ Ե Ղ Ը Ա Կ Ա Տ Ա Մ Ա Ր Տ Ր

ԽԱՆԱՍՈՐԻ ԼԵՌՆԱԳԱՇՏՈՒՄ

ԿՈՒԻՑ ԱՌԱՋ

1

Յուլիս 21-ն է արդէն:

Արշալուստմը կազմ ու պատրաստ է:

Տեղ հասաւ վերջապէս «Լրտեսող» ջոկատը, որ դընացել էր ճանապարհները և թշնամու դիրքն ուսումնասիրելու: Բանակը տենդային անհամբերութեամբ սպասում է առաջ խաղալու հրամանին . . .

Մօտենում է այդ ժամը: Ֆէդայիները հրաւիրում են զինուորի հանդիսաւոր երգումը տալու: Երգման վայրում—հէնց որ հաւաքում են ամէնքը—նշան է արւում բարձրացնել Դաշնակցութեան փառահեղ դրօշակը, որ կտակն էր վաղամեռիկ մի ընկերուհուն՝ ող-

բացեալ ՄԱՐՕՅԻ: Դրօշակի հանդիսաւոր վերելքը էլէկտրացնում է բոլոր ներկայ եղողներին: Անասելի ոգևորութեան մի աղաղակ է դուրս պրծնում կրծքերից:

—«Կեցցէ՛ Դաշնակցութիւնը, կեցցէ՛ Յեղափոխութիւնը, կեցցէ՛ խմբապետը . . .»

Առաջ է գալիս արշալուստմի ֆէդայի-քահանան և, համառօտակի բացատրելով ֆէդայու կոչումը՝ բարձրաձայն կարդում է կօմիտէի խմբագրած երգմագիրը, որ հետեւեալ բովանդակութիւնն ունէր մօտաւորապէս.

«Նա, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ֆէդայիս, ազատ կամքով Դաշնակցութեան յաղթական դրօշակի տակ մոնենով, տալիս եմ՝ եմ այս երգումը Կուսակցութեանս վրէժ կեդրոնական կօմիտէին:

Երգում եմ Դաշնակցութեան յաղթական դրօշակով, երգում եմ՝ ընտելութիւնը կործանող յեղափոխական սրով՝

Որ չեմ դաւաճանի ընկերիս, չեմ դաւաճանի ղեկավարներիս, չեմ դաւաճանի ֆէդայու վեհ իշխումին, չեմ դաւաճանի Դաշնակցութեան դրօշակին. . . .»

Անկարելի էր խորապէս չյուզւել ականատես լինելով այդ վայրկենին՝ երբ ֆէդայիները ուրախութեան արտասուքը աչքերում, գրկում էին իրար, եղբայրական սուրբ համայրի մէջ յաւերժացնելու իրենց անսուտ երգումը:

—«Միասին կուենք և միասին մեռնենք:»

Երգման արարողութիւնը վերջանալուց յետոյ առաջ է գալիս ընդհանուր հրամանատարը, որին ընդունում ենք բուն ծափահարութեամբ ու կեցցէնելով: Սակայն համեստ խմբապետը խնդրում է մեզ լռել խորին լուր-թեան մէջ լռում է իր բարձր, ազդու և յուզած ձայնը . . .

Երկար բացատրում է նա Մայր-Հայրենիքի ընդհանուր թշնամութիւնը, նրա դարեւոր ցաւերն ու տառապանքները, նրա արդի օրհասական կացութիւնը: Բացատրում է այն պատճառները, որոնք ստիպեցին Դաշնակցութիւնը «երեւան գալ և անհաւասար կռիւ մղել հայրենիքի թշնամիների դէմ:» և վերջապէս անցնում է ներկայ գործի՝ արշալանքի անհրաժեշտութեանը և նրա յաջող վախճանից անկախած օգուտներին: «Մեզանից է կախած յեղափոխական ընդհանուր գործի յաջողութեան մէկ մասը, ասում է նա: Յոյց տանք մեր հասարակութեան թերահաւատ մասին, որ մենք ընդունակ ենք յեղափոխական — թէև անհաւասար — կռիւը յաջողութեամբ մղելու, իսկ միւս կողմից ցոյց տանք ամբողջ աշխարհին, որ հայն էլ գիտէ կուել Հայրենիքի ազատութեան համար. . .»

Հրամանատարից յետոյ սկսում է խօսել նաև — արշալանքի համար ջերմապէս աշխատողներից մէկը, — որ իր հակիրճ և ոգևորիչ խօսքերով ընդհանուր համահրանք է շարժում:

—«Տղերք, վերջացնում է նա, վեհանձն եղէք դէպի տկարները. ոչ մի դէպքում ձեռ չտաք կանանց և երեխաներին: Իսկ տղամարդկանց՝ անխնայ կոտորեցէք:»

Խօսում է նաև ֆէդայի-բժիշկը, ֆէդայի-քահանան և ուրիշներ. բոլորին էլ վարձատրում ենք անվերջ ծափահարութիւններով և որոտածայն կեցցէներով:

* *

Կիշեր է. . . .

Ֆէդայիների բանակը, ոտի վրայ պատրաստ, սպասում է հրամանի՝ արշալանքն սկսելու:

Աչք եմ տեսնում որ չարտասուէր, սիրտ եմ տեսնում որ

չգգածէր տեսնելով նրա զինւորական փայլուն կազմն ու սարքը: Արշաւախումբը կազմում են հետեակ զօրքը և հեծելազօւնը: Հետեակները բաժանւած են տասնեակների, յիսնեակների և հարիւրեակների. իսկ հեծելազօւնը տասնեակներից է բաղկացած:

Ֆէդայիները իրենք են ընտրել անմիջական ղեկավարներին՝ տասնապետ, յիսնապետ և հարիւրապետ. իսկ սրանք էլ իրենց կողմից՝ ընդհանուր հրամանատարին և նրա օգնականին:

Պատերազմական խորհուրդը կազմում են ընդհանուր հրամանատարը, սրա օգնականը, հարիւրապետները և երեք կողմնակի անձեր: Այդ մարմինն է վերապահւած անհրաժեշտ պարագայում փոխել կռւի յատակագիծը, նորը կազմել, շարունակել կամ դադարեցնել կռիւը:

Պատերազմական խորհուրդը հանդիսանում է ղեկավարող գերագոյն մարմինը լիազօր իրաւունքներով:

Ամբողջ բանակը զինւած է կատարելագործւած Մօսինի հրացաններով:

Ամեն մի ֆէդայի կրում է 3-4 հատ փամփուշտանոց 230-300 փամփուշտով, որոնց մի մասն էլ տեղաւորւած է մէջքին կապած տուրակում: Բացի փամփուշտից տուրակում դարսած է նաև ութ օրէայ ուտելու պաշար, կարևոր գործիքներ, դեղեր, թել-ասեղ, լուցկի, ծխախոտ և այն ամէնը որ անհրաժեշտ է ֆէդայու համար: Քամակին կապած ունի և իր ջնամանը:

Ժամանակն է արդէն: Ընդհանուր հրամանատարը իր շուրջն է ժողովում բոլոր ղեկավարներին, բացատրում է կռւի ընդհանուր յատակագիծը, ճանապարհի վրայ ձեռք առնելու բոլոր զգուշութիւնները, որոշւած կարգախօսները (պարօլ), և զանազան հրահանգներ տալուց յետոյ արձակում է նրանց՝ արշաւանքն սկսելու...

Բանակն առաջ է խաղում օրինակելի զինւորական կարգապահութեամբ:

Բանակի առաջից և յետեից 50-100 քայլ հեռաւորութեամբ գնում են առաջապահ և վերջապահ գնդերը: Նրանց պարտականութիւնն է հսկել բանակի ապահովութեանը: Մի քանի հոգի զատւելով այդ գնդերից պիտի հետևեն իրար 15-20 քայլ հեռաւորութեան վրայ և ամէն մի կասկածելի երևոյթի մասին արագօրէն բայց աննշմարելի կերպով իմաց պիտի տան գլխաւոր ուժին:

Հեծելազօւնը պաշտպանում է բանակի թիկունքը: Յիսնեակների առաջին փողփողում են եռագոյն դրօշակներ, իսկ ամբողջ արշաւախումբին իր վեհ ծալքերի տակ հովանաւորում է Մայր Դրօշակը՝ նւիրական ընծան Ապառաժ Կոմիտէի: Քնքոյշ մասներ դրա մի երեսում աւելցնալով ծածկում են խորհրդանշաններ, իսկ միւս երեսի վրայ բանաստեղծի ծանօթ խօսքը. «Ահա՛ եղբայր, քեզ մի դրօշ, որ իմ ձեռքով գործեցի»:

Մայր-դրօշի պաշտպանութիւնը յանձնւած է Դ յիսնեակին:

Բանակը առաջ է սլանում մեղմիկ եղանակելով. պատերազմական մի երգ: Գիշերւայ խորին լռութեան մէջ բանակի համաշախ քայլերը, զանգերի տիկնական ձայնը, քիւղական անգիւնների հեռաւոր արձագանքը, և այդ բոլորի հետ ֆէդայիների զսպւած ոգևորութիւնը՝ հրաշալի մի ներդաշնակութիւն էին կազմում:

Հայրենի օջախից և սիրելիներից առմիշտ թերեւս անջատւած և մահւան դիմող ֆէդային զրկւած չէ սակայն մի վերջին բայց անգին միութարութիւնից — ժողովրդի ջերմ համակրութիւնը և արտասւտաթոր հրաժեշտը, որի արժէքը զինւորը միայն գիտէ:

Եւ հայ գիւղացին լիովին կատարեց իր այդ նւիրական պարտքը...

Բանակի կայան ընտրւած ամբողջ գիւղը՝ մեծից մինչև փոքրը, ծեր ու երիտասարդ, կին ու պղնդ, մինչև իսկ երեխաներ, բոլորն էլ անսահման խանդավառութեամբ ուղեկցում են բանակին՝ յաջողութիւն և բարի վերադարձ մաղթելու...

Յոգնութիւնը մոռցւած էր և նրանք անվերջ ուղեկցէին թերեւս... Եթէ չհնչէր հրաժեշտի ժամը, բանակը վաղուց արդէն հեռացած մարդաբնակ վայրերից՝ հասած էր լեռնային ճանապարհներին:

Յուզւած՝ արտասւտաթոր աչքերով կրկին և կրկին համբուրեցանք այդ բարի գիւղացոց հետ և անջատւեցանք սրտի սեղմումով:

Դեռ երկար լսում էր նրանց բարի մաղթանքները, տեսնում հեռւից նրանց թաշկինակների և գլխարկների ծածանումը, մինչև որ ամպածրար լեռների լանջերում իսպառ կորցրինք նրանց մեր տեսիլից:

II

Յուլիս 24-ի պայծառ և լուսնկայ գիշերն է:

Կաթնանման լուսի միջից իր հպարտ գագաթն է բարձրացնում հսկայ Արաուլը, իսկ դրա աջ ու ձախ կողմերից ցցւում են բազմաթիւ մեծ ու փոքր կատարներ, իրենց հովանու տակ առնելով մթին ձորեր ու լայնատարած դաշտեր:

Երբեմն այդ վայրերից խաղաղ շինականի անուշիկ տաղերն էին հնչում, իսկ այսօր՝ վայրենի մռնչիւնները արիւնխում մագնիկների, որոնք տարիների ընթացքում ծծեցին ու քամեցին աղբակեցու վաստակն ու արիւնը: Բայց հիմա երկար դարեր ստրկութեան տակ հեծող հայը, որ իր շղթան միայն քարշ տալու էր սովոր, այսօր մի սիրտ ու մի հոգի՝ զէնքը ձեռին առաջ է թռչում վրէժը լցնելու իր նահատակւած եղբայրների, լրկւած քոյրերի, սրբապղծւած խորանների, վրէժը՝ տանջւած ու անարգւած մի ամբողջ ազգի:

Ֆէդայիների բանակն է դա, որ շտապում է դէպի Արաուլ:

Քանի առաջ այնքան աւելի է բազմապատկւում ընդհանուր ոգևորութիւնը: Երկար ճանապարհը յոգնեցրել է ամէնիս, բայց դարձեալ թռչում ենք մենք և ոչ քայլում. բոլորն էլ շտապում են բոլոր առաջ հասնել կռւի դաշտը՝ ճակատ ճակատի հանդիպելու թշնամուն:

Առաւօտեան ժամի 4-ն է (ըստ եւր.)։ Երկնքում ցուլանում է մի ընկնող աստղ և մի վայրկեան լուսաւորում է արշաւախումբը. յաջորդում է մի խուլ որոտ, որ արձագանգ է գտնում հեռու լեռներով: Մի ուրախ ժպիտ է անցնում բոլորի երեսով:

— «Ընկերներ, ասում են տղերքն, իբար, թռէք, Շաւրաֆի աստղն էր, որ ընկաւ»:

— «Սուլթանի փառքն էր, որ խաւարեց» ասում են ուրիշ բերաններ:

Բարի գուշակութիւնները նոր սիրտ են տալիս և մեր քայլերն արագացնում:

Բանակն հասել է Արաուլի արևելեան լանջը իսկ սարի հարաւ-արևմտեան ստորոտում փռւող՝ Խանասորի ընդարձակ լեռնադաշտում ընկած են համարիտ Մարզիկ աշիրաթի 250-ի մօտ վրանները։ Պրանցից աչքի են ընկնում երեք հատ սպիտակ, որոնք պատկանում են ցեղապետ Շարաֆ բէյին։ Սա այն Շարաֆն է, որ տարիների ընթացքում Մեծ-Մարգասպանի հրահանգով քանդեց ու աւերեց Աղբակը, բնաջինջ արաւ այդ գաւառի հայերը։ Նա էր, որ 1894-ին 400 ձիաւոր ուղարկեց — որոնց միացած էին նաև 50 կանոնաւոր զինւոր — պարսից հողում գտնւող Դերիկի վանքի վրայ, ուր այդ ժամանակ գտնւում էր գաշնակցական Ֆէդայիների 20 հոգուց բաղկացած մի խումբ։ Շարաֆին պատկերած էր Բահրի փաշայի կողմից՝ յեղափոխականների այդ բռնը ոչնչացնել և դրանով Պարսկաստանի հայերին տեղական կառավարութեան աչքում կասկածելի դարձնել։ Սակայն մարզկեցիք զօրեղ դիմագրուութեան հանդիպելով՝ կորագլուխ ետ դարձան։ Այդ հրէշն էր, որ հերոս՝ յուլիսին Ս. Բարթոլոմէոսի վանքի շրջակայքում անխնայ կոտորեց 800 վանեցի խեղճ փախստականներին ու արմենականներին, և իբր վարձատրութիւն իր այդ անլուր արարքին՝ օսմանիէի Բ. կարգի պատանշանն ստացաւ Մարգասպանից և հազարապետութեան աստիճանին բարձրացաւ։ Նրանից արժանաւորը չէր կարող գտնել Համիդը սահմանադրուիւր պաշտպանելու համար Ֆէդայիների դէմ, ուստի և այդ գործը յանձնել էր Շարաֆին, 50-60 զինւոր նրան տալով իբր օգնական։

Լոյսն արդէն բացւում է՝ առաւօտեան մեզմ գեփիւռը ողջունում է մեզ Արաուլի գագաթի մօտ ընկնող ձորերից մինում։

Անհրաժեշտ էր դադար առնել այլևս առաջ խաղալ խոհեմութիւն չէր մեր ներկայութիւնը կարող էր նկատուել և թշնամուն զգուշացնել։ Հետեակ զօրքը մընում է ձորում, մի քիչ հանգստանալու, իսկ հեծելագունը շտապում է բռնել բոլոր այն բարձրութիւնները, որոնք ռազմագիտական տեսակէտից կարևորութիւն ունենին մեզ համար։

Այդ յատակագիծը կատարեալ յաջողութեամբ գործադրեցաւ։

Կէս օր է արդէն, մէկը շարժւում ենք գէպի բարձրութիւնները։

Շատ դժւար է նկարագրել այն տպաւորութիւնը, որ մենք զգացինք այդ բարձրութիւններին հասնելու։ Դժբախտ հայրենիքի սգապատ լեռներն ու գաշտերն էին փռւած մեր աչքի առջև։

Հեռու՝ արևմտքում, հսկայ պահապանների նման կանգնած են Սիփանն ու Արտուը, Վարագն ու Առնոսը, իրենց հպարտ գագաթները փայլեցնելով ամպերի միջից։ Գէպի ձախ, հարաւ, Կորդուաց լեռները յոյառաջ՝ են կանչում մեզ իրենց լերկ կրճէները դէմ արած։ Իսկ մօտը, մեր դիմաց, մի նւիրական վայր, Ս. Բարթոլոմէոսի վանքը դարևոր յիշատակներ է կենդանացնում... Եւ կարծես այդ անգնդախոր ձորերից մի խուլ աղաղակ է գալիս հասնում մեր ականջին. «Վրէժ, վրէժ» են ձայնում մեր նահատակած թանկագին ընկերները։ Մի սարսուռ է անցնում բոլորի մարմնով, ուռչում են կուրծքերը, արցունքը հեղեղում է աչքերից, և ամէնքը յուզումից դողահար, գետին են փռւում սիրոյ և յարգանքի համբոյրը տալու տանջած այդ մայր երկրին։

Տիրում է խորհրդաւոր լուռութիւն։

Օրը տարաժամ է, արևն արդէն պատրաստւում է իր վերջին մնաս-բարեն ասելու մեզնից շատերին...

Արաուլի մենաւոր բարձրութեան վրայ պատերազմական խորհուրդ է գումարւում օրւայ անելիքը որոշելու։ Ընդհանուր հրամանատարը և խորհրդի անդամները զբաղւած են տենդային աշխատանքով։ Նրանք դիտակները ձեռքներին՝ ուսումնասիրում են վրանների դիրքը, շրջակայքը։ Երկար դիտելուց յետոյ վճռում են մի զօրեղ յարձակում գործել բաց դաշտի կողմից։ Որոշւում է վրանների դիրքին համեմատ երկու մասի բաժանել ուժերը. մի մասը աղեղի ձեռով պիտի շղթայէ վրանների արևմտեան և հիւսիս-արևմտեան կողմերը, երկրորդը՝ արևելեան և հիւսիս-արևելեանը. իսկ հեծելագունը երկուսի միջին գտնւած տարածութիւնը յետեի կողմից՝ թիկունքը պաշտպանելու համար։

Խորհրդի անդամները ամէն կերպ աշխատում են կուլի յատակագիծը իր տարրական մասերով հասկացնել թէ նրա գործադրութեան մասնակցող խումբերին և թէ ամէն մէկ Ֆէդայու։ Յաջողութեան առաջին պայմանը պահովւած է, եթէ իւրաքանչիւրը գիտէ իր անելիքը և առանց ուրիշին խանգարելու՝ կատարում է իր դերը։

Մօտենում է խորհրդաւոր վայրեհանը, տղերքը մահւան են պատրաստում։ Պատերազմական խորհրդի տեղից մի քիչ ցած, երկու պետութիւնների սահմանագծի վրայ, երկու քահանայ եկեղեցու վերջին միութարանքն են մատակարարում մահւան գնացողներին։ Ֆէդայի-քահանան՝ մի ձեռքում խաչ, միւսում՝ սուր սկսում է խօսել։ Նրա կրակոտ խօսքերը յափշտակում են մեր հոգիները։ Ե. դարն է կարծես ներկայանում մեր աչքերի առջև, իսկ այդ կատաղի կրօնաւորը Վեռնդ երէցի դէմքն է յիշեցնում... Նա վերցնում է Ֆէդայու թիկնեղէ ջրամանը, ուր պատրաստ էր Ս. Հաղորդութիւնը և բաշխում է խոստովանող Ֆէդայիներին... Վերջին մընաս-բարեն են տալիս նրանք իրար և այսպէս «մահ հագած մահ հալածելու» են գնում։

Լուում է յանկարծ մեր մի թիւրք ընկերոջ Սամուէլի ձայնը։

— «Ընկերներ, եթէ ես ընկնեմ, յիշեցէք գոնէ, որ մի թուրք զինւոր ձեզ հետ միացած կուում էր բռնութեան դէմ»։

Արևն արդէն մայր է մտնում։ Մենք նախկին կարգով, մեզմ քամուց ծածանող գրօշակներով և «նորապսակ» շարականը երգելով կամաց՝ իջնում ենք վրանների հիւսիսային կողմում փռւող Խանասորի ընդարձակ լեռնադաշտը։ Բանակն իջնում է մի ահաւոր զառիվայր, որ ցերեկը՝ նայողի վրայ սարսափ է ազդում։ Մարդ ապշում է որ մենք այնքան հեշտութեամբ այդ տեղով իջնել կարողացանք՝ կարծես հարթ ճանապարհի վրայ լինէինք։ Թէև եղան գլորւողներ և սայթաքողներ՝ սակայն բանակի կարգը չէր խանգարւում։ Ամէն մի տպանեակ իր տասնապետի և յիսնապետի հետ առաջ էր ընթանում անխռով։ Մեր շուրջը խորին լուռութիւն է թագաւորում, որ երբեմն ընդհատւում է ձիերի դոփուկով։ Պայծառ լուսինը նազիկ սահելով լուսաւորում է մեր ճանապարհը։ Հեռւում փայլում են վառ կէտեր, վրանների կրակն է դա։ Գէպի այդ կրակներն են յառած մեր աչքերը, դրանց շուրջն են խմբւած մեր թշնամիները...

Բանակը արդէն գտնուում է տափարակ դաշտի վրայ, թշնամու վրաններից 4-500 քայլ հեռու:

Յարձակման ժամը որոշւած է լուսաբացը. բայց գիշերայն ժամի 11-ն է գեռ: Պառկեցանք հանգստանալու՝ մեր ներքե ունենալով քարերն ու խոտերը, իսկ վերեւ՝ հարաւի կապուտակ և աստեղազարդ երկինքը: Բայց ու՛մ քուներ կը տանի. ժամերը օրեր են թուում, այնքան դանդաղ են անցնում. մինչ մենք սրտատրոփ տենչալի ժամին ենք սպասում:

Հասնում է և այդ ժամը. առաջ ենք գնում:

Աւերակ պանդոկի մօտ ենք հասել՝ վրաններից քիչ հեռու՝ 100-150 քայլ միայն:

Լուսնի մէջ լուում է հրամանատարի ձայնը.

«Տղերք, ձեզ մատաղ վրէժխնդրութեան ժամին հասաւ արդէն: Լինել և չլինելու վայրկեանն է այժմ: Մեր խոհեմութիւնից ու կարգապահութիւնից է կախած գործի յաջող կամ անյաջող ելքը:

«Պուեցէք մինչև ձեր վերջին շունչը, բայց միշտ խնայեցէք կանանց ու երեխաներին:»

Պէտք էր շտապել: Խմբերը հէնց այդ տեղից բաժանեցին և սկսան առաջ գիմել վրանների դիմէ զուգահեռաբար, սերտ կապ հաստատելով միանգամայն իրար հետ:

Վրաններն արդէն շատ մօտ են. մի փոքրիկ անդգուշութիւն կամ մի շշուկ կարող է արթնացնել մեր նիրհած թշնամուն և մեր յոյսերը խորտակել: Ամէնքն էլ գլուխ են այդ և խիստ կերպով զգուշանում: Ահագին բազմութիւնն առաջ է գնում մի մարդու նման, լուռ, շունչը փորը ձգած, ոտքերը յուշիկ փոխելով:

Քիչ յետոյ վրանները մեր աղեղնաձև շղթայի մէջն էին լինելու...

Բայց ցեղապետի սպիտակ վրանները դուրս են մնում՝ պաշարման գծից. նրանք մեզնից բաժանւած են մի գետով, որի ծանծաղուտը տարակոյսի մէջ է ձգում մեզ ինչ անենք. անցնենք. հապա՞ծ եթէ տղերքը խրէին տղան մէջ: Իսկ եթէ գետը չանցնենք, մեր թշնամիների պետերը մեր ձեռքից կը պրծնեն և միւսներին էլ անցք կը տանք փախչելու:

— «Տղերք, գետն անցէք» ձայն է տալիս ընդհանուր հրամանատարը և երկու տասնեակ թուում են միւս ափը, մինչև ծնկները տղմի մէջ թաղւելով:

Վրանների պահապանները դեռ 2-300 քայլ հեռաւորութեան վրայ նշմարել էին մեզ մութի մէջ. բայց հասարակ ճամբորդի տեղ դնելով՝ լուում են...

Անդանիների բնազդը չէր խաբւած սակայն. նրանք գուշակում էին գալիք չարիքը. մի արտասովոր համերգ էր որ սկսած էր. շունը հաջում էր, ձին խրինջում, էջը խռնչում, ոչխարները մայում և արջորները կանչում էին:

Այդ խառնափնթոր ձայները գիշերայն լուսնի մէջ և աստիճանաբար մեր մօտենալը կասկածի մէջ էր ձգում պահապաններին. աւելի սարսափահար է անում նրանց մութի մէջ անընդհատ շարժւող այդ սև ուրաւ կանների պահած խորին լուսնիները...

Բանակը մի հսկայ և առասպելական օձի նման 700 քայլ ձգւող իր շղթայի մէջն էր առած արդէն մարդկցիների 250-ի չափ վրանները: 40-50 քայլ հեռաւորութեան վրայ՝ եղած կարգադրութեան համաձայն կանգ առանք, պառկեցանք գետնի վրայ, երեսներս դէպի վերանները և հրացաններս լցնելով անհամբեր սրտա-

տրոփ սպասում ենք փողի ձայնին...

Հէնց այդ վայրկեանին լուում է մի քիւրդի ձայնը.

— «Լճ, լճ, հուն չի մարիֆն» (էյ, էյ, դուք ի՞նչ մարդիկ էք):

Լուռ ենք մենք: «Ագամայ մութը» արգելում է նրանց մեր ով լինելը որոշել:

Իրարանցումն ընկնում է քիւրդերի մէջ:

— «Զիւաւոր հասցրէք Բաշկալա» լուում է մինից:

— «Յայտնեցէք աղին» կանչում է երկրորդը:

— «Իրեքերը բռնեցէք» ձայն է տալիս մի ուրիշը:

— «Աստուծ, ֆէդայիներն եկան, ո՞ւր փախչենք» որքում է մի կին:

Հնչում է և մեր պատերազմական փողը:

ՖԵԴԱՅԻՆԵՐԸ ՎԱՆԻ ՄԷՋ

ԿՌԻԻ ՍՊԱՀԱՆ ԼՃԱԿԻ ՄՕՏ. — ՎԱՆ ՄՏՆԵԼԸ.

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼ. ՀԻԻՊԱՏՈՍԻ ՀԵՏ

Վան 16/28 օգոս. 97.

Երեք գիշերւան տաժանելի ճամբորդութենէ մը ետքը հասած էինք Բերկրի, Սպահան լճի մօտ (Վանայ Ծովափի արևելեան կողմը): Լոյսը բացւած էր, և մենք չյաջողեցանք գիշերով մեր դիրքը բարձրանալ, որովհետև Ապաղայի մէկ երկու գիւղերէն հաց ճարելու համար զուր տեղը 2-3 ժամ կորսնցուցած էինք: Արշալուսին հովիւ մը հեռուէն նկատեց մեզ, այնքան հեռուէն, որ անհնար եղաւ բռնել կամ սպաննել: Անմիջապէս ֆէդայիներու երևալը ամէն կողմ տարածեց և պինդ առաջ մօտիկ վրանները:

Մենք սկսանք պատրաստուիլ վերցնելով մեզ հետ բաւականաչափ սառի կտորներ — որովհետև ջուր չի կար — բարձրացանք սարի գագաթը ու դիրքեր շինեցինք: Մեր շտապով պատրաստուիլը զուր եղաւ. քիւրդերը չհամարձակեցան շուտով դուրս գալ ֆէդայիներու դէմ: Սպասելէն համբերութիւննիս հատաւ. յուլիսի վերջին օրերու շոգը մեր վրայ չէր ազդեր, բայց մեր սրտերը կը տրոփէր գեղեցիկ մօսիներու որոտը լսելու ու թշնամու ուժը չափելու:

Իսկապէս ֆէդայիներու հոգեկան վիճակը ծանր էր. օր ու գիշեր, անլուր նեղութիւններ կրելէ ետքը, լուռ ու մունջ ներս մտնել գործ մը չկատարած, մինչդեռ մեր ընկերները ճիշդ նոյն պահուն մէկ ուրիշ կէտի վրայ զարմանալի քաջագործութիւններով ամբողջ աշխարհի հիացումը կը վայելէին, սարսափ ազդելով թիւրք կառավարութեան և վայրենի քիւրդերուն:

Արիւնը եփ կուգար մեր երակներուն մէջ. դիրքեր չի նեցինք և կանոնաւոր պատնէշներ բարձրացուցինք: Օրարսակէն առաջ կրկին անգամ սառի մեծ կակ կտորներ բերինք և ընկեր մը յաջողեցաւ լեռան մէկ կողին վրայ աղբիւր մը գտնել, ուրկէ լեցուցինք մեր ջրամանները:

Կէս օրէն երկու ժամ ետք երկու ձիաւոր քիւրդ սարի ետեւէն դուրս եկան. կամաց կամաց դէս ու դէն լրտեսեցին, քիչ մը ուրեցան բոլորեցան, և մեզ նկատե-

լով 3-4 հրացան արձակեցին: Մինչև այն ատեն սուս փուս կը դիտէինք զիրենք. իսկ չորրորդ անգամ հրացան արձակելուն ալ չկրցանք համբերել: Արձակեցաւ մասինի գնդակը ու անոր որոտի հետ դուրս եկան սարի ետեւ պատրաստ ձիաւոր քիւրդերու վոհմակը:

Վաւան սկսած էր: Քիւրդերը, ախ այդ բարբարոս, քաջամարտիկ հռչակած քիւրդերը, ոտքերնին թեւ առած էր, որ կողմ կծկելնին շարքեր էին: Հապա կառավարութեան զապթիէնները, անոնց փախուստը ահապին քրքիւնքի բարձրացուց մեր մէջ. ալա՜հը տաւ որ ձիաւոր էին ու շուտով կարողացան պրծիլ մեր անողորմ մասին ներէն: Վաւը տեւեց մինչև իրիկան մութը: Հաւար շատ տեղերէ հասաւ, երեք կողմերէ պաշարեցանք. բայց այնքան հեռաւորութենով՝ որ մեր վրայ արձակած գընդակներէն շատ քիչերը մեզ կը հասնէին: Վարելի է ըսել թէ մասինը հիապէս ցոյց տաւ այդ տեղ իր շնորհքը: Իսկ անձնէր ֆէդային, ախ անոր հոգուն մատաղ, իր անունը քիւրդին սիրտը փորէն կը հանէ:

Արեւը մայր մտաւ, մթնշաղ էր: Մենք չափականց փամփուշտ կրակած էինք. որովհետեւ հոգ. «Դաշնակցութիւնը ողջ մնայ, գնդակը առատ է:» Մեզմէ պուտ մը արիւն չինկաւ, թշնամիէն ինկած էին 7-8 հոգի, 2-3 ձիեր. վիրաւորներու թիւը յայտնի չէ:

Արեւը մայր մտնելուն հետ աներեւոյթ եղան մեր թշնամիներն ալ այդ աշխարհածանօթ քաջերը:

Ծրարեցինք զենքերնիս ու բեռներնիս որոնք շատ ծանր էին. մանաւանդ որ յոգնած և արիւն-քրտինք մտած էինք: Շալկւորներէ երկուքը որ մը առաջ իրենց տեղը ծամբած էինք և երկու ընկեր ալ մօտիկ գիւղ մը խրկած էինք հաց գտնելու համար. որովհետեւ նախորդ գիշերը Սպաղայի գիւղերէն հաց չկրցանք հանել: Վաւը սկսելուն մեր երկու ընկերները չկրցան ժամանակին հասնիլ. յաջորդ օրը միայն կրցանք իրար գտնել:

Թշնամին հեռացաւ. իսկ մենք ինչու չչարունակեցինք սկսած գործը, այս հարցը մեզ կը տանջէր: Ինչ ընել: Սահմանագլուխը սկսած էր արդէն գործը. իսկ մենք մտադրած էինք Վան հասնիլ և եթէ սահմանագլխի մեր ընկերներու Մեծ արշաւանքի առթիւ կառավարութիւնը իր թոյնը քաղքին վրայ թափէր, կարողանայինք պաշտպանել անտէր հայ ժողովուրդը: Այդ մտքով մնաս-բարով ըսինք կուրս դաշտին և առաջ քալեցինք:

Հետեւեալ օրը լսեցինք սահմանագլխի Մեծ արշաւանքի մասին, թէ ինչպէս ֆէդայիները յարձակած են Շարաֆ բէկի վրայ և սրէ անցուցած են ամբողջ ցեղը. թէ ինչպէս կառավարութիւնը խեղճորոյս ինչ ընելը չէ գիտցեր. և ըն:

Այս լուրը առնելուն պէս՝ շտապեցինք և հնար եղածին չափ շուտ քաղքին բոլորը հասանք: Կառավարութիւնը հաստատ իմանալով մեր ներկայութիւնը չուզեց տեղէն շարժիլ. բաւականացաւ քաղքին չորս կողմը զինւորական ամուր շղթայով մը կապել որպէս զի յեղափոխականները ներս չմտնեն:

Շնորհիւ ձեռք. սուլթանին բոլորովին անվստահութիւնը մեզ համար:

Խստութիւնները կը շատնան հետզհետէ. կառավարութիւնը, երեքսեղէն, խաղ մը պիտի հանէ վերջապէս:

Անդիական անամօթ հիւպատոսն է որ հազար ու մէկ ձեւերով կը ջանայ իր դերը շարունակելու երէկ, իր եւրկած պաշտօնական յայտարարութեան մէջ՝ որ Մատր Ալէնի միջոցով մեզ հասցուց, իր և ֆրանսական հիւպատոսի կողմէն՝ իրենք զիրենք ալ ազատ կը համարէին ո՛ր և է պատասխանատուութենէ և կը յայտարարէին որ մինչև երէկ առտու երաշխաւորած էին կառավարութեան՝ գործը խաղաղութենով կարգադրելու համար: Եւ վերջին անգամ հրաւեր կը կարգար ֆէդայիներու խմբապետին գալ ու տեսնել իր հետ: Անամօթ մարդիկ. տղայի նման մեզ խաբել կ'ուզեն: Վարժես այնչափ աշխատած են հայերու համար, որ հոգիներնին դուրս եկած է ու հիմա ալ չպիտի աշխատին: Հեռու...

Խմբապետին վերջին երկու ամսեան բացակայութեան ատեն նոյն անգլիական ոստիկան-հիւպատոսը կը կանչէ խմբապետին քոյրը, Զարուհին, և երկար բարակ խմբապետին, շան-բարոզներ կարգալէ ետքը՝ կը յորդորէ որպէսզի նամակ գրելով աշխատի եղբօրը նորէն Վան մտնելուն արգելք ըլլայ:

Հայ ֆէդայիները Բերկրի կուրս բռնած ատեն, Արսէն վարդապետի-կտորը*) և ջոյները հարսնիք բռնած էին, հաւատացած ըլլալով որ ամենքը պիտի կոտորւին և քաղաք չպիտի կրնան հասնիլ:

Իրենց սեւ բախտէն չիրականացաւ ուխտերնին, և հայ ֆէդայիները անվստ քաղաք մտան, հակառակ կառավարութեան ձեռք առած խիստ միջոցներուն:

Քաղաք մտնելէն ետքը անգլ. պատկառելի հիւպատոսը Մըստր Ալէնի միջոցով փափաք յայտնեց խմբապետին հետ տեսակցութիւն մը ունենալ: Երբ այդ տեսակցութիւնը մերժեցաւ և ազդու կերպով ցոյց տրեցաւ այն որոշ պատճառները՝ որով իրաւունք կ'ունենար Դաշնակցութիւնը չվստահիլ իրենց և կարեւորութիւնը չտալ հիւպատոսը կատրեցաւ, փրփրեցաւ, ահաւանդեց կծրցուց. բայց ինչ օգուտ, իր կրակը չէր աղդել, ֆէդայիներուն:

Վերջապէս, մտմտաց տաճկական քծնող, շոյող և անուշ քաղաքականութիւնը ձեռք առնել. գոնէ իր ըսելիքները լսել տալու համար: Մըստր Ալէնի միջոցով խրկեց մեզ իր տեսակցութեան էական կէտերը գրաւոր կերպով, որուն համառօտութիւնը կը գնենք:

«Ինչ որ կը գրեմ, չէ թէ ժողովուրդ կամ պարտաւորութեան տակ է, հապա իմ անկեղծ զգացումն է, որ կուզեմ յայտնել:

Հայ յեղափոխականներուն թիւը-պարսկական սահմանագլուխ արշաւանքի մասին հիացումն յայտնելով, չեմ կարող չխոստալ միայն անոնց հիմնադի քաջութիւնը, որ շատոնց արծազանգ գոտած է Եւրոպայի մէջ եւ մեծ յուզում առաջ բերած: Անգլիոյ եւ ֆրանսայի մէջ առաւելապէս համակրելի եղան, երբ ստուգեցաւ մանաւանդ թէ յեղափոխականները ամենայն ազնւութեամբ չեն ուզած սպաննել ոչ կիս, ոչ տղայ. այդ քաջագործութիւնը տարիներէ իվեր տիրող շատ համոզումներ փոխեց:

Քիւրդերու անգույզ ըլալու կարծիքը ջուրն ինկած է. անոնց գործած խժոժութիւններուն մեղքը թիւք պետութեան վրայ կ'էջնայ: Այս գործող ազանցեցն ետքը քնալ իրաւունք պիտի չունենայ ըսելու «չեմ» կարող զապել քիւրդերը: Եւ ես ամէն քան տեղ-տեղանք գրած եմ Պուխ ղեկավարին եւ ուր որ հարկ է:

Ձեր գալուն շարք տեղի չունենալը միթաւրական է: Ապշեցնող է մանաւանդ երբ ամբողջ քաղաքը շղթայի տալով առնուած ատեն՝ մէկէն յեղափոխականները ներս կը մտնեն անսպասելի արիւնքներով եւ յանդիմութեամբ: Այդ անմեղքութիւնը գովելի է:

Արշաւանքէն ետքը պարսիկ կառավարութիւնը խոստացած է

*) Ժամօթ. Առաջնորդ Արսէն վարդապետին՝ եւ հայ հակառակ-
ներու բռնած կեղտոտ, անազնի վարմունքի մասին՝ ղեկի խմբապետը եւ ընդհանրապէս Դաշնակցութիւնը. գուցէ, սոխի ու
նիւսիք ուրիշ անգամ պարզել փաստերով:

յնդափոխականները բռնեցու, որով, զոնէ առայժմ, այդ ապաստանը անապահովէ եւ հոսէ խոյ տուողները չպիտի կրնան հանգիստ ապրիլ այնտեղ:

Դեպքանները ուժ ունին հիմա. եւ գործի օգտին տեսակէտով լաւ կը լայ հիւժ յնդափոխականները անշարժ մնայ:

Ծիշո՛ ծիւր զարուն օրը (°) Փրանսական հիւպատոսին հետ զաւանները պիտի երթայինք տուրքերու գեղծումները թնկելու եւ պահանջելու. իշխանութենէն որ ծանօթ ըլլալ շարագործները պատժելն (°). այս մասին մեծ յոյս ունինք:

Ձեր ներկայութիւնը խոշորութեամբ ըլլալով կարելի չէ բան մը սպասել խաղաղութեան պահանջման համար:

Կուսակալը չուզելով այս բաները, կ'առաջարկէ անձնամուտը ըլլալ անմիջապէս, ներկելու պայմանով. ինքը (անգլ. հիւպատոսը) կ'երազիսաւորէ այս բանին:

Փրանսական հիւպատոսին հետ տեսակցելով՝ այն համոզման եկած ենք որ եթէ պայմանները չընդունւին եւ խառնակութիւններ ծագին, յնդափոխական վարկը մեծ վնաս պիտի կրէ Գաղիոյ եւ Անգլիոյ մէջ (բացառութիւն այս մասին):

Աչքի առաջ ունենալով ապագայի մտաւարտ դժուակութիւնը, կառավարութեան մօտ միջամտողի դեր ստանձնած եմ, պատասխանատու ըլլալով մինչեւ առաւօտ (օգոս. 15-27). յուսարով գործը անուշի կ'սպիւն եւ երկրին հանգիստը պահպանել:

Այս թուղթը խմբագրեալին հասցնելէն ետքը, հիւպատոսը անոր քոյրը կանչեց եւ քանի մը ժամ խօսելով ջանաց համոզել որ խմբագրեալը քայլ եւ անձնատուր ըլլալ աւելցնելով թէ հայոց համար մտածող կայ արդէն. իրենք թող հանգիստ մնան: Իսկ եթէ չյանձնուին, Պարսկաստան դառնալը անհնար ըլլալով, իզուր պիտի ջարդուին եւ երկրին խաղաղութիւնը պիտի վերցովնէ ինք:

Վերջնապէս մեծօրդական պատասխան տուեցաւ թէ հիւպատոսին եւ թէ կառավարութեան:

Բան մը պատահած չէ դեռ:

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Ե Ո Ի Ր Զ Ը

Ալլաին շուրջ գերագոյն հրճանքի մեղքաւորները կանցնէ ժամանակէ իվեր, որովհետեւ իր դազի համարը միւսիւրման աշխարհի մէջ ցնծութեան փրկորոտ հարստներ առաջ բերած է:

Անապատի աւազին վայելէ լողացող ու չհնդուրուշի փառարներուն եւ ծմալներուն մէջ կծկաւոր շուրքի կամ արեւի երես շտեմաւոր մահմետականները խաղ կը խաչեն, կարծելով թէ նոր Մէհտի մը ցնկեր է անապատէն -- թերեւս ջայլամի հաւկիթէ մը: Վերջապէս մէհաւի (սուրբ պատերազմ) մը շնկեցն է որ կը բաւէ ճիւղալթարէն ծաւալ:

Թիւրք թերթերը որ անընդուն անբաններ կը կարծէին, խաւիֆային հռչակով արեւն իսկ կը դողացնեն եւ համիւրամութեան փառաբանութիւնով ծրագիրներ կը հինկն ապագային չէ թէ հայկական, հապա տիեզերական անխնայ սրածուծիւնով մը վերջ տալ կեանքներու պիտի գոյութեան:

Օսմ. սուլթանը արեւելիս թանկագին ժամերը ու ուժը սյսպէս կը սղծէ ու կը մնի:

Փառքի միջաբեկին ծայրը անարկու չէ՝ տեսնել «հաւատացեալներու պետք», երբ մօտ ապագային Երուսղէն պիտի հեռագրէ չինտիստան կամ այլուր, «չուրանի անունով աշխարհ փող կը խրկեցէ... կամ ջարդեցէ կեանքները, բանդեցէ քաղաքակրթութիւնն եւ... պնդեց կնիկները ինծի խրկեցէ: Ու ամէն տեղ գրեցէ որ պառսկէք, «լա իլա իլալա» սուլթան համար ընտելաւ:

Խորհուրդ կուտանք սուլթանին հաշիշ տալ հաւատացեալներուն:

*
*
*

Գազանները երբեմն երաժշտութեան ծայնէն կանուշան. քայց ձարիկի գազաններու ծայնէն նոր կը լսի: Մուրատ պէյը օրինակ: Թէեւ Պ. պէյը կրնայ սնդիկ թէ վոսիորի սիրէսներուն ծայնէն էր որ քաշեց զինքը չէ թէ սուլթանին:

Մուրատ պէյը տէն էր Պոլսի Միզան Թերթին որ ատեն մը յնդափոխական օրգանն ըլլալու յաւակնութիւնը վայելեց:

Կը կարծէր թէ Մուրատ պէյ իրեն տաղսանցի, թիւրքե-

րու զաղափարական ցամաքութեան մէջ նկարագրի ուժ պիտի ցուցնէր. քայց փութ ելաւ: Ան ծէր լեռը սատկած մուկ մ'ալ չձագունց: Անցեալը արդէն խոստմանից չէր:

Երբ սուլթանի շուրքին տակ կ'արծէր ատեն մը ծակ իմաստակի հովերով, երդում պատահ կը լար որ հայերը պատմութիւն չունին... ապերախտ են եւն:

Օրին մէկը, իսլամութեան այդ անգիտակից ու միափառ միջին, սուլթանի վրէժինդութիւնէն իր հաւածական նեղոսի ափին վրայ դադարիկ մը աննիւէ ետքը -- թերեւս մեծ վտարանդիի հովեր ալ առաւ բուրգերու մեծութեան տաշեւ -- ինքզինք Երուսղէն տեսնեց, ու խորունկ դիւանագէտի ու ազատամիտի ինքնախաբէութիւնով, սկսաւ կամիթներ տալ սուլթանի եւ անոր պաշտպանութեան:

Երկան շտեկն այս տօնքիչօտութիւնը: Տեսնելով որ թիւրքերը միջակ բերնէն փելով ուտել գիտեն եւ իր անհուն փառամոլութիւնը կը խոչնդէ փշիւնք մը պիտի ըլլայ իրեն, մտաւ միշտ վտարական հուրինքով աշխարհէն հեռու, ձգեց զրիւք -- խոստովանելով որ իր գրածը ծառատուքներ էին -- ու զլիւն ծար մը մը մըտաւ առաւ:

Համիտը հոտառուկ գայլի պէս, կոսեց որ թիւրքերը յնդափոխական ապիկարութիւնովն պիտի արատեն թիւրք անունը, աղու սէլամալէնով մը հրաւիրեց զիրենք, անյիշաւար ըլլալով երեւց տղայութիւններուն:

Տաճիկ յնդափոխականները խօսքահաս են իր իրենց փատիշահին ծայրը... անուշ հնչականութիւն մը ունի:

Իսկ Մուրատին օգոստեան վերանմանութիւնով մը կըսէր «Մուրատ, արի բարեկամ ըլլանք...»

Մուրատ որը վոսիորի հեշտանքը ու իզգէթի փառքը չէին քնացներ. վազեց, ետակելով իրեն պէս պոռոտներ, ու լալով պլուեցաւ «ծովերու ու հովերու» գթառատ սուլթանին ոտքը, թէեւ երբեմն «ալշար» արքայատիտոյն տուած ըլլար անոր:

Խօսքերը կը թռչին, գրածները կը ծալուին...

Հիմա Հիսարի աշտարակներուն տակ, սուլթանը իր «մեծ քէօլէ»-ին առջեւ, իր ժամանց, կը ծոլ մը նետած է, քանի մը թիւրթ թուղթ՝ որու վրայ իր մեղքերը կը սղկէ...

Տաղստանցի մանչը դասաւիթ ու սեւերես գնաց հոն ուրիկ գոռութիւնով կծկած էր:

Եթէ Միզանտի կապիկը, փսխածը լկելով, հայրենասիրական թելադրում մը զգաց, իրենց աղտոտ լաթերը մէջերին լուարու մորթով կը սխալէ. թիւրքի անդուրոտ ընկելու համար կրնտի օճաններն ալ չեն բաւեր:

Ալլահը սուլթանը հասցուց իր մուրատին. Մուրատն ալ կը հասնի անշուշտ իր... մուրատին:

Տոճան եւ դաւաճան Մուրատը մ'ուրթատ եղաւ, «կրիտասարդ թիւրքի» ալ «պապուկ թիւրքի»:

Սուլթանը Բարիզ «Մէշվէթէ» թիւրք Լրագրին դէմ պատուոյ դատ բանալով -- իր թէ «հայկական ջարդերու ատեն նախատած էր զինքը -- կուզէր յունական յաղթութիւնէն ետքը քարոյական յաղթութիւնով մը աշխարհէն շնչել, «մեծ մարդասպան» տիտղոսը: Պատուոյ դատը աստիճանական վերիւր մը պիտի ունենար մինչեւ Ելատուրն որ կըրահայրն եղաւ մեծ խալիֆային:

Անի քայլին խաղք խոստատակ եղած, նորէն աշխարհի լեզուն հսկա խեղճ սուլթանը. «Լատ, մունտառ, մարդասպան» քացք գանչութիւնները կը կնի յարութիւն ասին:

«Մէշվէթէ»-ի խմբագիրները աժան պրծան հայկական ջարդերուն շուրքի: Թէեւ կեղծիք մ'էր քստ: Անմէտ Բիզա՛ որ Գոնդի հեռեւոր կը դաւանի ինքզինք, ծրերը չէ ունեցած անոր «պապալաւոյ» ոգին. ինչքան ալ խառն ծագում ունենայ, թրքական մեխերով գամած են իր զգացումները ու մտածումները: Հայկական անխիղճ խողխողումներու ատեն, սուլթանի հասցէին սկսածայ կրկն խօսք կը գրէր. կըր հայերը փոխվե՛մ լուծել փորձին բիթը բերանը կը ունեցէր: Բիզայի ոգին, թէեւ քառասուն, սա էր. «Հայերը եւ են որ աղսման կառավարութեան ձեռք կը վերցնեն»:

Բիզա «հաւաքեալութիւն» կըրէն է եւ դրական փոխտիպայութիւնով կամ օժթայութիւնով, դրական մեխիւման անեղ պետութիւն մը հաստատել կուզէ: Միւս ազգութիւններուն կը պաշտպան իր կամ խաղաղի ձեւ մը ընծայելով միայն: Սակայն, այնչափ քարի է, այնքան փափկասիրտ, որ մէկ թիւրքին թելը դալի չուզէր: Ուստի լալու ու պաղատելու քաղաքականութիւնը ընդունած է, կ'աղերսէ Երուսղայի որպէս զի թիւրքի մը քէյֆը չեղած, անընդուն սիրտը թունդ չ'անած, թիւրքի անուշ շուկուն: Սկզբունքով կատէ յնդափոխականը, զի թիւրքերը խաղաղասէր են, անոնք Գոնդի դրական վարդապետութեան քայլերգովը կը քալեն. այսինքն «հաւաքեալութիւն»:

Երբեմն իր թերթին նշանաբանը քրած էր «կարգ ու առաջնիւն»: Ան ալ վերցուցած է հիմա, իր Դուրանի խաղաղութիւն: Գուցէ քստ մահմետականին կարգը անկարգութեան մէջ է, եւ յառաջնիւնութիւնը տղիտութեան մէջ: Գրական փոխտիպայութիւն

աւ կը դաւանի առ սկզբունքը, ցարդ՝ իրողութիւններու անկարգութեան մէջ, չէ կրցած որոշ «գիտութիւններու դասակարգ մը» հաստատել: Ուրեմն Ղուբարը եւ Գոնդ ինչպէս նաեւ Ռիզան, իրար չեն հակասեր:

Տիւրք ճշմարտութիւն...

Յեղափոխութիւն... կեանքի գործ է ան. քարի մահմտակամը՝ ուրիշները ծամելու. եւ ինք տը կ'ընելու է: Բայց «Մէշէքէթ»-ի Պ. Խմբագիրը, չի մտածել թէ այն ողջ որուն վրայ մեծ մեծ կը բրդէ այսօր, յեղափոխական ուրակները մարքած են Ու ղեկ լոյս կը կարգայ աշխարհի ու փառիշտին եւ մահմտական կրօնի քննարկի ճատագրութիւնով գլուխ կ'ուռնեն:

Լաց ու խազէ Պ. Ռիզա. բայց «կը ծանշանք ան երկերը ուր արեւը սեւ կը ցաթէ»:

* *

Յունա-թրքական խաղաղութիւնը կնքելու վրայ է. կ'ընէ... Աստուած կամենայ. որովհետեւ Պենելոպէ կտաւն է...

Յունաստան ելեւմտապէս եւ գրեթէ քաղաքականապէս եւրոպական քննարկի տակ կը մտնէ: Յունաստանի թագաւորութիւնը ալ անանական է: Վիլհէլմի ու Ջոզեփ վաշխառուներու շահերն են որ Հելլադայի ծակատաքերը պիտի վարեն ասիէ ետքը:

Թիւրքիան ռազմականոր սահմանագիծ մը պիտի ստանայ. Թիւսալիոյ պարպելը՝ գործը գիտէ... Բայց կըսեն թէ համաճարակ մը թիւրք գիւղերն են կը տասնորդէ, անոնք «իզոգիս արեւմուտի» ծամբելով: Բնութիւնը աւելի բարեգութ է:

Կրեւտէի ժողովուրդը տրամադիր է եղեր անկախութիւնով գոհ ըլլալու: Ժողովականները լայնալի կը յօրանեն իրենց նաւերուն մէջ... Ճէփաթ, հայերու ճէլլատ փաշան, սիւրէններ տարեր է եւրոպական նաւերը ընկղմելու համար. բայց աստուածները անգագայացուցեր են ծովակաւները...

Յունաստան իր ընելացն է որ կը քաշէ. ինչն մոռցաւ Թիւսի-դիւլէսի խլած իմաստուն պատգամը «թէ յայնքը փայտէ -- այսօր պողպատէ -- պատմէնքնու ետեւ պէտք է ապաւինին»:

Իրաւ է թէ ան ատեն Եորկիոս մը չունէին:

* *

Պոլսի վերջին դէպքին առթիւ աս ու ան գրեցին. շատեր երկիրը լուծիւն պահեցին: Մէկը կը գրէր «Հայերը 300,000 դիակներու դաշտ մ'ունին ետեւին, ահա իրենց խորհրդատուն... Իսկ Լոնտոնէն անանուն կ'օրհնէ մը ֆրանսական թերթի մը կը գրէր «պատգամի շեշտ մը դնելով իր գրածին մէջ «Պոլսի դէպքը իրենց կ'օրհնէին գործը չէ. անոր հեղինակները ոստիկանութեան գործակներ են...»

Հեղինակը անծանօթ է, Եւրոպայի պէս մատակուղներու մէջէ կը խօսի: Դադարաբաւէս լուրտած մտքի մը ծրուքն է աստ անուայ լեզուն կամ անկար մեղեքիտի մը զառանցը: Տրամաբանական շփոթութիւն մ'ալ կայ. տեղիկատուն վերագրելով Պոլսի դէպքը ոստիկանական գործակներու կարծեք է թէ Պապ-Ալիի վրայ յարձակումը նազըմ պէյի մը կամ ոստիկանապետի մը աշակերտութիւնով կրնայ ըլլալ միայն... Ներկան անցեալով կ'երաշխարդէ...

Առ կ'օրհնէին մէջ Յանսի գլուխ մը ըլլալու է.

* *

Կար չիկար էշէգեան պատերազմը մը կար: Ամէն իժիբ պալատ արտարարի գնալուն, աշքը կը չիէր որ սուլթանը նշան մը կախէ թափանին վրայ. ապա թէ ոչ քան մը կըզոյնար պալատէն: Ասանկ են մեր պատերազմները. շքանշանի համար դարձ կընեն, սրտաւերք կամ տղոցկան կիներու պէս:

Սուլթանը երբ հայերուն խաղ մը խաղալ ուզէ, նախ քերանգոցէր ընծայ մը կուտայ պատերազմին -- քերանգոցէրի հակառակը: Պոլսի դէպքն ետքը, եւ հալածանքէն առաջ, փառիշտը Օսմանիէ ժապաւէնի շորք տուաւ... շորիկ պատերազմին:

Բայց Օրմանեանը՝ չիորհեցաւ թէ աս բուրջի կտորը որով վիշապագուն կուրծքը սազած է, հայրութեան վերապալ չըլլար: Գոնէ Շէֆազաթի ժապաւէնը թողնիկ շորկալ կըլլայ:

Սուլթանը հայրական հալածանքները կը շարունակէ, գնդամներու մէջ կամ Անատոլիի խորքը տատրեկուն եւ թշուա ընելով աշխատաւոր հայութիւնը:

Սրբազան, ձեր հսկայ զանգաւորն ու կողտ սրտին մէջ Սրտածորի ոչ տրոփը ունի որ տրոփը, բայց մտիկ քէք. հրեղէն լեզուներու պէտք չունիք ներշնչելու համար, չէ: Երբ փառիշտին երթաք, օրմանական ծայրով կըսէք անոր. «Այս ժապաւէնները, օգուտ չունին: Հայ ազգը թշուա է, կըբողքէ. դուն վատաբար փառիշտին ան. ես խօսք Զուկ կընար հասկնալ ազգին յեղափոխականներուն, որոնք պահանջներ ունին արդար ու մարդասիրական եւ որոնց ախիւն մէջ գնդիկներ կան, լացի ու հո-

գեւաբքի հեղք ծուլած»: Աւելցուր, «իմ ազգս ու անոր յեղափոխականները, պարկեշտ քաղցրներ են, խաղաղութեան ու եղբայրութեան համար հոգի տուող, ոչ շանը օշա կըսեն, ոչ հաւուն քիշ: Կատարէ անոնց պահանջը, արդարութիւն ցուցուր անոնց, դուն ալ կազատիս իրենք ալ...»

Ետքէն պահանջի մը կըսես. կամ... էգան մը.

Ուղղակի իրատ մ'ալ տուլթանին: Մենք մեր յոյսը չենք կտրած, որովհետեւ դժոխքի չիմէն չենք անցած, բայց երբ հարկ ըլլաւ անցնիլ, պինդ առաջ թիւրքիան կը հրենք... Փառիշտ, գուր են վատութիւնները, ահ ու սարսափները. ծնունդներդ ուռնիքու կը փոխուին, եւ ոճիւրներդ ահեղ վրէժիմներութեան: Զերը ծան մերը պաթլիթան չէ: Փէղայիի գնդակը քեզ ալ կը գանէ.

Et les gardes qui veillent aux barrières du Yildiz
N'en défendent pas les Sultans rouges.

Ու ղեկ չենք արտասաներ Կատոնի վճիռը...

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ Կ. ՊՕԼՍՈՒՄ

Կ. Պոլսի վերջին դէպքերի առթիւ. ձերբակալուած լազմաթիւ հայերի կոտորածները թիւեր 10 հոգու մեղադրելով իրր այդ դէպքերի հեղինակ, 8-ին մահաւան դատապարտեց, իսկ 2-ին անպարտ արձակեց:

Մահաւան դատաւճօր լուրն ստանալուն պէս՝ Դրօշակի խմբագրութիւնը Սեպտ. 6-ին հետեւեալ հեռագրով դիմեց եւրոպական մեծ պետութիւնների արտաքին գործոց նախարարներին.

«Թոքատի կոտորածների հեղինակները ներման սրժանոցած լինելով, վրդավիշուցիչ անարգարութիւն կը լինի թող տալ մահով պատժել քաղաքական յանցանքների համար վերջերս դատապարտուած հայերին»:

Խնդրում ենք Ձեր Վեմուլթիւնից արգելք հանդիսանալ զուր արիւն թափելուն, որը միայն ներկայ կայո թիւեր ծանրացնելու կը ծառայի»:

Չորս օր յետոյ, սեպտ. 10-ին, գերմանական Frankfurter Zeitung լրագրի մէջ կարդում ենք հետեւեալ հեռագիրը Կ. Պոլսից.

«Սուլթանը պատրաստ է ներել մահաւան դատապարտուած հայերին, եթէ փրանտայի ու Անգլիայի պետականները չշարունակեն պահանջել Թոքատի կոտորածի համար մահաւան դատապարտուած մահմեդականների վճիռ կատարումը»:

Ա Ջ Գ

Տեղի անձկութեան պատճառով յաջորդ համարին մէջ կը հրատարակին ներառութեան ցուցակները կեդրոնական Սնտուկի, Խմբագրութեան, Տապար, Վիշապ, Վրէժ, Ոսկէհանք, Վասպուրականի և Աղբըսանգրիոյ կ'օրհնէներուն:

Խմբագրութեան գիմէլ հետեւեալ հասցէով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)